

## Դասընկերներու հետ՝ հայրենիքի մէջ

## Երանուհի Ղազարեան

- Նորէ՞ն Հայաստան գացիր:
- Նորէն:
- Դեռ անցեալ տարի հոն չէի՞ր:
- Անցեալ տարի ալ, վեց տարի առաջ ալ: Ամէն մէկը իրեն յատուկ

համ ու հոտով: Վեց տարի առաջ սեղմ ընտանեկան էր, անցեալ տարի՝ ընկերային, որ իր մտերմիկ ջերմութեամբ նմանեցաւ ընտանեկանի, այս տարի լայն ընտանեկան – քոյրերու ու եղբայրներու՝ Մելգոնեան Կրթական-Հաստատութեան 1968-ի շրջանաւարտ դասընկեր-դասընկերու- հիներու հետ Մայիս 16-23 կը հանդիպէինք հայրենիքի մէջ, նշելու համար մեր աննման կրթօճախին 85-ամեակը:

«Ի՞նչ 85-ամեակ,» պիտի ըսեն շատեր, «դպրոցը փակ է 2005-էն ասդին»: Ճիշդ է, սակայն մենք տակաւին կը յուսանք անոր վերաբացուելուն: Բայց նոյնիսկ եթէ ի դերեւ ելլեն մեր յոյսերը, ՄԿՀ-ի հիմնադրութիւնն ու կարեւորութիւնը ոչ ոք կրնայ ժխտել, հիմնադրութիւն՝ որ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան եղբայրներու աննախընթաց նուիրատուութեան ընդմէջէն տուա՛ւ միայն ազգին, մասնաւոր սփիւոքին – տնօրէններ, ուսուցիչներ, խմբագիրներ, ազգային գործիչներ, գիտակից հայեր: Ան լիովին արժեւորեց իր գոյութիւնը, անմահացնելով բարերարներուն անունը եւ հպարտութիւն առթելով իւրաքանչիւր Մելգոնեանցիի: Այսպէս, ուրեմն, անոր հիմնադրութեան յոբելեանները պետք է որ յիշատակուին նոյնիսկ եթէ շարունակէն փակ մնալ իր դռները, նոյնիսկ Մելգոնեանցիներու չգոյութեան պարագային:

Փառք, պատիւ յաւիտեան  
Լուսոյ անշէջ վառարան  
Կրթարանին Մելգոնեան  
Փառք ու պատիւ յաւիտեան:

Այս տարի Հայաստանի մէջ հանդիպելու գաղափարը յղացած էր մեր «կարգադրիչ» Արան, 2008-ին՝ մեր շրջանաւարտութեան 40-ամեակին առիթով Գարիպեան կղզիներու «հայկական» ծովագնացութեան մասնակցութեան յաջողութենէն ետք: Կրթուած էինք սիրելով հայերէնը, հայկականը, Հայաստանը: Քանի կարելի չէր Մելգոնեանի հողին վրայ տօնախմբել 85-ամեակը, հայրենի հողէն աւելի յարմար տեղ կրնա՞ր ըլլալ:

17 դասընկերներ – հաւասար թիւ մը չէր կրցած միանալ մեզի – մեծ մասը իրենց կողակիցներով, ոմանք ընտանեկան ու բարեկամական պարագաներով ալ, կու գայինք Կիպրոսէն, Աթէնքէն, Պոլիսէն, Պէրթօքէն, Հալէպէն, Էմիրութիւններէն, Մոնթրէալէն, Թորոնթօյէն, Պոսթօնէն, Լոս Անճէլէսէն, Փարիզէն ու Լոնտօնէն: Կային մի քանի տարբեր տարիներու – մէկ վեր, մէկ վար – շրջանաւարտներ ալ, ինչպէս նաեւ 1995-ի շրջանաւարտ Արտակը, որուն «պզտիկ» անուանեցի երբեմն. կրնար մեզմէ ռեւէ մէկուն զուակը եղած ըլլալ: Բայց չէ՞ որ տարիքը թիւ մըն է լոկ երբ Մելգոնեանցիին կը հանդիպի ուրիշ Մելգոնեանցիի մը: Մեզի կը միանային մեր ուսուցիչներէն՝ Սեպուհ Աբգարեան, Սարգիս Համպոյեան, Սիհրան Ճիզմէճեան: Յուզիչ էին հանդիպումները, գրկախառնումները, մասնաւոր անոնց միջեւ, որոնք չէին հանդիպած 1968-էն ի վեր: Փոխուեր էինք, անուն տալը անհրաժեշտ եղաւ ընդհանրապէս զիրար ճանչնալու համար. 43 տարին խաղալիք չէ:

Երեւան-Էջմիածին-Հոփսիսիմէ-Գայեանէ-Ծիծեռնակաբերդ-Գառնի-Գեղարդ-Սեւան-Դիլիջան: Նոյնն էին հայրենիքի տեսարժան վայրերը, բայց տարբեր էր գոհունակութիւնը, տարբեր էր փորձառութիւնը: Տպաւորիչ է հպարտացնող նորութիւն էր ինծի համար Մայր Հայաստանի արձանին տակ գտնուող զինուորական թանգարանը, նուիրուած մասնաւոր մեր նորագոյն գոյապայքարին, հայրենի թէ սփիւոքահայ, գոհուած թէ վերապրած մարտիկներուն, մարտերուն, հայաշխարհի նոր քարտէզին:

Այնքան պտըտելուն ուտելն ալ պէտք էր: Եւ ճաշեցինք կամ ընթրեցինք լաւ ընտրուած ճաշարաններու մէջ – Երեւանի կեդրոնը, Հրազդանի ափին, Քասախի կիրճին մէջ, Գառնի՝ բացօթեայ, Դիլիջան,

Էջմիածին – ընտիր ճաշատեսակներով, միշտ երգ ու նուագով: Կերանք ու խմեցինք, երգեցինք ու պարեցինք – սուտ չխօսիմ, ես նստած տեղս պարողներէն էի – դարձեալ

միասին ըլլալու ուրախութենէն արբած, անկրկնելի պահեր անցուցինք: Իսկ օրուան աւարտին, մինչեւ յաջորդ օրուան «պօսիկ» ժամերը՝ հինը նորին խառնելով անցուցինք պանդոկի հիւրասրահին մէջ: Իրարմէ կշտանալ չկար. շաբաթ մը վերջ կրնայինք նորէն քնանալու մասին մտածել: Այս ճաշկերոյթներէն մէկուն ընթացքին Բիւզանդը եւ Մարին յուզիչ անակնկալ մը վերապահած էին մեզի – ՄԿՀ նշանը կրող, Պոլսոյ մէջ պատրաստուած փողկապներ նուիրեցին տղոց եւ վզկապներ՝ տիկիններուն, որոնք ընդունեցինք խորին շնորհակալութեամբ եւ հպարտօրէն կրեցինք կեդրոնական հանդիսութեան իրիկունը:

Չորեքշաբթի, Մայիս 18-ի երեկոյեան Կոմիտասի անուան կամերային սրահէն ներս տեղի ունեցաւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան հիմնադրութեան 85-ամեակին նուիրուած յօրէլինական հանդիսութիւնը: Պատուոյ հիւրն էր վարժարանիս երկարամեայ դաստիարակ, արուեստի եւ երաժշտութեան ուսուցիչ, պարուսոյց, խմբավար, այժմ «Գոհար» համոյթի ղեկավար պրն. Սեպուհ Աբգարեան: Ներկայ էին հայրենաբնակ Մելգոնեանցիներ՝ նկարիչ Յակոբ Յակոբեան, մանկավարժ Պետրոս Պետիրեան, Մատենադարանի գիտաշխատող Վահէ Բարթիկեան:

Յայտագիրը սկսաւ Հայաստանի Հանրապետութեան եւ Մելգոնեան Կրթական Հաստատութեան քայլերգներով, կատարմամբ Հայաստանի Պետական Կամերային Երգչախումբին, խմբավարութեամբ Ռոբերտ Մլըեյանի: Հանդիսավարն էր հեռուստամեկնաբան Արթուր Բախտամեան, որ իր բացման խօսքէն ետք ներկայացուց Մելգոնեանի կարճ պատմականը, լուսանկարներու ընկերակցութեամբ:

Օրուան բանախօսն էր 1945-ի շրջանաւարտ, հայրենի գրող, հրապարակագիր, հասարակական գործիչ, նախկին յունահայ՝ Կարպիս Սուրէնեան, որ դժբախտաբար շատ կարճ խօսեցաւ, իրեն սահմանուած ժամանակը չչարաշահելու մտավախութեամբ: 1939-45 Բ. համաշխարհային պատերազմի ամբողջ շրջանը Կիպրոս անցուցած գրողը ըսաւ «ի՞նչը մեզ կը պահէր եւ կը մղէր գոհողութիւններու – հայկական ոգին պահպանող աւանդոյթները, հայկական շունչը, մթնոլորտը» եւ եզրակացուց «Մելգոնեանը ըստ էութեան չէ փակուած եւ չի կրնար փակուիլ, որովհետեւ պատմութիւն ունի եւ հայ մշակոյթի անբաժանելի մասն է:»

Ապա բեմ բարձրացաւ Բիւզանդը: Նախ քան իր սրտի խօսքը ուղղելը, ան մէկ վայրկեան յոտնկայս լռութիւն խնդրեց ներկաներէն ի յարգանս մեզմէ յաւետ բաժնուած մեր ուցուցիչներուն ու ընկերներուն: Իր խօսքին մէջ ան ըսաւ «Մելգոնեանը հայ երիտասարդին առջեւ բացուող դուռ մըն էր՝ հայ ոգիով կրթուելու, հայ մնալու, հայ ապրելու»: Ապա բեմ հրաւիրեց պարոն Սեպուհ Աբգարեանը, որ իր յուզախառն խօսքին մէջ անդրադարձաւ այն «կտոր մը հայրենիքին, որուն դռները փակուեցան անհաղորդ եւ անկայուն մարդոց որոշումով»: Այս առթիւ ան մեզի որպէս մասունք վերադարձուց մեր երբեմնի ուսուցիչ Պերճ Սանտրունի/father-ին յուշ-տետրակը, որուն մէջ իր հանգստեան կոչուելու առիթով մեր դասընկերներէն շատեր արտայայտած էին իրենց երախտագիտութիւնը: Իսկ Հրաչին վերադարձուց իր գծագրու- թիւններէն մին, խորապէս յուզելով զինք: Մենք ալ խորհրդանշական նուէր մը ունէինք պարոն Աբգարեանին համար – զարդագիր այբուբենի կտաւ մը,

պատրաստուած ԼոսԱնճէլէսաբնակ արուեստագետ Սիրուն Երեցեանի կողմէ: Վարձքը կատար մեր բոլոր ուսուցիչներուն:

Առանց երգչախումբի ելոյթին հանդէս չէր ըլլար Մելգոնեանի մէջ: Որքան տեղին էր, ուրեմն, հոյակապ գեղարուեստական բաժինը՝ կատարմամբ Հայաստանի Պետական Կամերային Երգչախումբին, ղեկավարութեամբ Ռոբերտ Մլըեյանի: Անոնք մընզի հրաճուցից Սեպուհ Աբգարեանի «Մելգոնեան Վարժարան»ը եւ «Հրեշտակ Զուարթուն»ը, Վահան Պետկեանի «Տաղ Սուրբ Մեսրոպայ»ն, Բարսեղ Կանաչեանի «Հոյ Նար»ը եւ «Շուշու»ն, Կոմիտասի «Հարսանեկան Շարք»ը, «Ձիգ Տու Քաշի»ն, «Հայր Մեր»ը: Հուսկ՝ ողջոյնի խօսքով ելոյթ ունեցաւ ՀՀ Կրթութեան եւ Գիտութեան փոխ-նախարարը: Յաջորդեց հիւրասիրութիւն:

Ծիծեռնակաբերդ մեր այցելութեան օրը արտօնութիւն խնդրած էինք ծառ տնկելու եւ յատուկ կարգադրութեամբ շնորհուած էր մեզի այդ արտօնութիւնը: Այսպէս, Շաբաթ,

Մայիս 21-ի առաօտեան վերադարձանք Հայոց Յեղասպանութեան 1,500,000 զոհերու յուշակոթող, ուր թանգարանի փոխ-տնօրէն Թումաս Թումասեանի, պարոն Համպոյեանի եւ պարոն Ճիզմէճեանի առաջնորդութեամբ եւ մէյ-մէկ բուռ հողով մեր բիրաւոր նահատակներու յիշատակին տնկեցինք հացենի մը, այդպէս կոչուած որովհետեւ սպանդէն ճողոպրած մայրիկները անոր հունտերը աղացած ու հաց թխած էին ողջ մնալու համար: Պարոն Համպոյեան առաջարկած էր փորձել գտնել Լեւոն Զաւէն Սիւրմէլեանի «Ասացուածք ծառ տնկելու առթիւ»ը, կարդալու համար ծառատունկի պահուն: Գտնողը ինք եղաւ, իսկ կարդալու պատիւը տրուեցաւ ինձի:

Տէր, օրհնէ՛ ծառն այս մատղաշ:

.....

Մեռելներուս իբրեւ խաչ՝ եւ այս ծառը տնկեցի:

Կիրակի, Մայիս 23-ի առաօտեան Երեւանի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ յաւարտ Ս. Պատարագի մեր խնդրանքով հոգեհանգստ-եան պաշտօն կատարուեցաւ Գրիգոր եւ Կարապետ Մելգոնեան անմահ բարերարներու, ինչպէս նաեւ վերջերս մահացած ընկերներու յիշատակին: Նոյն երեկոյեան սկսանք խումբ առ խումբ հրաժեշտ առնել իրարմէ, խոստանալով կրկին հանդիպիլ, բայց այս անգամ չսպասել 43 տարի:

Ուսուսիչներուս նուիրելու նպատակով հետո տարած էի անցեալ տարի Աթէնքի մէջ լոյս տեսած «Հայ-Յունական Ռազմական Առնչութիւն-ների եւ Համագործակցութեան Պատմութիւն» երկլեզու հրատարակութեան օրինակներ, որուն հեղինակն է Յունաստանի մօտ ՀՀ ռազմական կցորդ գնդապետ Սամվէլ Ռամազեան, իսկ յունարէնի թարգմանիչը՝ նուաստս:

Փոխարէնը եւ ալ ստացայ մի քանի գիրք: Անոնցմէ մէկուն - «Հոգեւոր Մտորումներ», պարոն Միհրան Ճիզմէճեանի քարոզներու եւ դասախօսութիւններու ծաղկաքաղ մը, խմբագրութեամբ պարոն Սարգիս Համպոյեանի - «Որպէս Մուտք»ին մէջ ի միջի այլոց կը գրէ պարոն Ճիզմէճեան «Խորապէս կը գնահատեմ եւ ի սրտէ շնորհակալ եմ Կիպրոսի Մելգոնեան Կրթական Հաստատութեան 1968-ի շրջանաւարտ իմ քանի մը աշակերտներու՝ Արա Գուլեանին, Միսաք եւ Մարո Ներսէսեաններուն, Յակոբ Պերպերեանին, Խաչիկ Թոզճեանին, եւ Աւետիս եւ Բիթա Օզգայեաններուն՝ որոնք իրենց երբեմնի ուսուցչին հոգեկան մեծ բաւարարութիւն պարգեւեցին, երբ սիրայօժար իրենց նիւթական օժանդակութիւնը բերին այս ծաղկեփունջին հրատարակութեան համար»: Երախտագէտ աշակերտին ներդրումը իր ուսուցիչներու աշխատանքին լոյս ընծայման: Ապրի՛ք տղաք:

Վստահ եմ թէ բոլորիս զգացումները արտայայտած կ'ըլլամ, եթէ ի խորոց սրտի շնորհակալութիւն յայտնեմ նախ եւ առաջ Արային, որ տարի մը ամբողջ ոչ միայն թափեց ամէն ջանք բացառիկ շաբաթ մը մէջտեղ բերելու նպատակով, այլ նաեւ մինչեւ վերջ մշտեց տատամտողները, կարելի եղածին չափ մասնակիցներու թիւը աւելցնելու համար. Վահէին եւ Գէորգին, որոնք որոշ կարեւոր հարցերու լուծման համար օգներ էին Արային. Միսաքին եւ «մեծ» Վահէին, որոնք այնքան վարպետօրէն ստանձնեցին ամբողջ շաբթուան «սեղանապետութիւն»ը: Շնորհակալութիւններ մեզի միացող մեր սիրելի ուսուցիչներուն - վստահ եմ թէ բոլորիս ալ վարքը գովելի կ'ըլլայ այլեւս: Յատուկ շնորհակալութիւններ արուեստագէտ-լուսանկարիչ Պօղոս Պօղոսեանին, որ Բիւզանդիին ու Մարիին ծանօթութեան շնորհիւ՝ այնքան օգտակար եղաւ լուսանկարներու հարցով: Շնորհակալութիւն բոլորիս՝ որ որոշեցինք մասնակցիլ:

Չեմ գիտեր թէ երբ կամ ինչ առիթով պիտի կրկին այցելեմ Հայաստան:

Գիտեմ, սակայն, թէ պիտի ունենայ իրեն յատուկ համն ու հոտը, նոյն հասարակ յայտարարով հայրենիքով: